



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

~~ԱՊՈՂԵՐԱՏԻԱՅԻ ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԱՐ~~

Դ. ՆԱԶԱՐԵՑԻՆ

ԱՆԴԱՄԱԳՐՎԻՐ ԿՈՌՈԵՐԱՏԻՎԻՆ

ՅԵՎ

ԼՐԱՑՐՈՒ ՓԱՅԱՎԱՐԴ


ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԿՈՍ»-Ի
ՅԵՐԵՎԱՆ 1928 թ.

၂၀၁၇၁၈၂၆

ရွှေအားလုံးကြော် ရန်မြန်မာနိုင်ငြန်

၂၀၁၇

ရွှေအားလုံး ၂၀၁၇၁၈၂၆



ရွှေအားလုံးကြော် ရန်မြန်မာနိုင်ငြန်

Գ. ՆԱԶԱՐԵՏ

334

G

Linn.




ԱՆԴԱՐԱԳՐՎԵՐ ԿՈՌԹԵՐԱՏԻՎՆԵՐ

338.1K (09)

3 4

ԵՐԱՅՐՈՒ ՓԱՅԱՎՃԱՐԴ

A 4532



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԿՈՈՊ»-Ի

ՅԵՐԵՎԱՆ 1928 թ.

ՀԱՅՈՒԼԻԳՐԱՖԻ Տ ՏՎԱՐԱՆ

ԹԱՏԵՐ 3795

ԳՐԱԿԱՆ. 823 Բ. ՏԵՐԱԳ. 5000.

I Ի՞ՆՉ Ե ԱՍՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՓԱՇԱՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ

Ամեն մի գյուղացի և բանվոր կոռպերատիվին անդամագրվելիս պետք է հիշի, վոր նա կոռպերատիվի վերաբերմամբ ունի մի շարք իրավունքներ և պարտականություններ և վոր կոռպերատիվին անդամ դառնալով նա իր սեփական կամքով հանձն և առնում վորպես ընկերության անդամ ոգտվել յուր իրավունքներից և միաժամանակ կատարել յուր պարտականությունները :

Վորոնք են այդ իրավունքներն ու պարտականությունները :

Համաձայն կանոնագրության, ընկերության ամեն մի անդամ իրավունք ունի ոգտվել ընկերության ծառայությունից և մասնակցել ընկերության զործերի քննության ու կարգավորման մեջ՝ նրա անդամների ընդհանուր կամ լիազորական ժողովների միջոցով :

Միաժամանակ ընկերության ամեն մի անդամ պարտավոր է աջակցել ընկերության զարգացմանը, կապվել յուր տնտեսության կարիքներովն իր ընկերության հետ, գնումներ կատարել ընկերության խանությներից և, վոր ամենակարևորն է, մուծել ընկերության դրամարկղը մուտքի վճար և փայտավճար; Կանոնագրության 11-րդ հոդվածում բառացի այսպես և գրված . «Ընկե-

բուրյան յուրաքանչյուր անդամ պարտավոր ե մռւծել
բնիկրուրյան գանձարկղը մուտքի վճար 50 կոպ . և փա-
յավիար 10 ռուբլի» :

Կանոնադրությունը բանվորների և գյուղացիների
կոստերացման դորձը հեշտացնելու համար 14-րդ հոդ-
վածում իրավունք ե տալիս փայտիարը մտցնել մաս-
մաս :

II ԻՆՉԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ Ե ԳԱՆՁԵԼ ՓԱՅԱՎՃԱՐԸ

Շատերը կարծում են, թե կոռպերատիվը պետա-
կան խանութ ե կամ թե համոզված լինելով, վոր կոռ-
պերատիվն աշխատում է պետության միջոցներով, ըն-
կերությանը փայտիար մտցնել չեն ուզում կամ յեթե
մտցնում ել են՝ մեծդժգոհությամբ ու ձգձգումներով են
այդ անում : «Խաղնան (պետական գանձարկղը) հա-
րուստ ե . . . ինչի՞ համար են մեր կոռպեկները»—այսպես
են ասում հաճախ կոռպերատիվի անդամներից վոմանք :

Ի հարկ ե այդ սխալ ե և այն ել մեծ սխալ . . .

Կոռպերատիվ ընկերությունը գյուղացիների և բան-
վորների սեփական ցանկությամբ ու կամքով կազմա-
կերպիած գործ է : Կոռպերատիվի ամեն մի անդամ այդ
ընկերական (կոլլեկտիվ) գործին պետք ե մասնակցի
յուր փայտիարով : Ով վոր փայտիար չի մտցնում կո-
ռպերատիվին—նա այդ կոռպերատիվի անդամ ել չի կա-
րող լինել : Նա պիտի հրաժարվի՝ այդ ընկերությունից,
դուրս գա անդամությունից, քանի վոր նա խախտում է
կանոնադրությունը :

Ճիշտ ե վոր «խաղնան» (պետական գանձարկղը) ոգ-
նում է կոռպերատիվին, քանի վոր խորհրդային իշխա-

Դությունը շատ և ցանկանում վոր բոլոր գյուղերում և
քաղաքներում առևտուրը կոոպերացիայի ձեռքն անցնի
և մասնավոր առևտուրը վերանա : Բայց այդ խոժ չի
նշանակում վոր կոոպերատիվի ահղամ բանվորն ու
գյուղացին ձեռքերը պետք և ծալեն և նայեն վոր «խաղ-
նան» իրենց համար կոոպերատիվ խանութ բանա և
նրանց խանութը լիքը ապրանքով պահի : Վո՛չ . . . Այդ-
պես չե . . . այլ բոլորովին դրան հակառակ : Խորհրդային
իշխանությունը և կոոպերատիվ կենտրոնները միշտ ել
ավելի յեն ողնել այն կոոպերատիվներին, վորոնց ան-
դամները ակտիվ են, իրենց ընկերության զործերին լավ
են հետեւում փայտավճարները լավ են զանձում, ժամա-
նակին հաշիվ ու ֆննություն են կատարում : Յեկ ընդ-
հակառակ՝ այն կոոպերատիվը վոր գործերը վատ և
տանում, վորի անդամները չեն հետաքրքրվում կոոպե-
րատիվի գործերով, փայտավճար չեն զանձում—այդպի-
սի կոոպերատիվը թե խորհրդային իշխանությունից,
թե Հայկոոպից ողնություն և աջակցություն քիչ են
ստացել, խակ ապագայում բոլորովին չեն ստանալու :

Ի՞նչո՞ւ . . .

Վորովհետեւ խորհրդային պետությունը այս քանի
տարիներս ինկատի առնելով, վոր մեր գյուղացիությու-
նը տնտեսապես քայլքայլած եր և մեր բանվորը քիչ ոռ-
ձիկ եր ստանում—շատ ել ուշք չեր զարձնում փայտավճար
հավաքելու գործին : Նա այնքան եր ողնում կոոպերա-
տիվին, վոր վերջինս առևտուր եր անում համարյա թե
պետության հաշվին : Յեկել են դեպքեր յերբ կոոպերա-
տիվի մի բուրլուն պետական և կոոպերատիվ բանկը
բաց են թողել 8-10 և նույնիսկ 15 ր . փարկ :

Այժմ ժամանակը փոխիվել է :

Ամենից առաջ Պ-Տ տարի առաջ մեր զյուղացին այնքան եր քայլայված, վոր կոռպերատիվին 5-10 ր. փայտվար տալ չեր կարող յեթե նույնիսկ ուզենար : Այժմ ամեն մի տնտեսության տեր գյուղացի (բացի ծայրահեղ չքայլորներից ու բատրակներից) շատ հեշտությամբ կարող է լրացնել յուր փայտնարը կամ յեթե նոր և անդամագրվում կոռպերատիվին 10 ր. կարող է մոցնել 2-3 ամսվա ընթացքում :

Այժմ ամեն մի բանվոր և ծառայող ժամանակին ոռնիկ և ստանում և նույն իսկ ամենափոքր ոռնիկ ստացողը կարող է 3-4 ամսում լրիվ փայ մտցնել յուր կոռպերատիվին :

Յեկ վերջապես այս մի քանի տարիների ընթացքում մեր լուսոր բանվորներն ու գյուղացիները զործով համոզվել են, վոր կոռպերատիվը իրենց անտեսության շատ անհրաժեշտ և ոգտակար և և ամեն մի զիտակից բանվոր ու գյուղացի նրան պետք և յուց ուժերի չափ ոգնի և տուածին հերթին յուր լրիվ փայտվածարը մուծի :

Վորովինու այդ փայտնարի գումարն է, վոր ցույց և տալիս թե կոռպերատիվի անդամները վորքան են կապված իրենց կոռպերատիվի հետ և ինչքան կարելի յենրանց պետական ու կոռպերատիվ բանկերից վարկ տալ :

Այս բոլորից հետո մի ամենագլխավոր հանգտմանք ես չպետք և մոռանալ . . .

III ԽՆԴՈՒՄՏՐԱԼԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՅԵՎ ԿՈՌԵՇԱՑԻԱՆ

Մեր պետության բարձր մարմինները կոմկուսուկցության ԽՎ համագումարի վորոշումներից յելնելով

պետք և մեծ ուշադրություն դարձնեն մեր յերկրի ին-
դուստրալացման գործի վրան.

Ինչ և նշանակում ինդուստրալացում :

Այդ նշանակում և մեր յերկրի (զյուղի ու քա-
ղաքի) տնտեսական շինարարությունն այնպես տանել,
վոր մենք հնաբավորին չափ կարճ ժամանակում մեր
յերկիրը ծածկենք մեծ գործարաններով ու զավագնե-
րով, վոր մեր զյուղացիությունը յուր տնտեսության
մեջ կիրառի մեծ մեքենաներ և ելեկտրական ուժ, վոր
մեր յերկիրն ինքն արտադրի մեր տնտեսության հա-
մար անհրաժեշտ մեքենաներն ու սարքավորումը և
փոչ թե այդ բոլորն ստանա արտասահմանից :

Ինդուստրացում—մասնավորապես զյուղի համար,
այդ նշանակում և այսորվա փոքր ու չքավոր տնտե-
սությունների տեղ ստեղծել մեքենաներով ու ելեկ-
տրականությամբ սարքավորված, ապրուստի ու աշ-
խատանքի կուլտուրական պայմաններով չըջապատ-
ված, կոլեկտիվ տնտեսություններ (կոմմունաներ,
արտել, զյուղատնտեսական գաղութներ), յերբ զյու-
ղացին անհատական տնտեսությունից անցնում և հա-
մայնական տնտեսության գեղեցիկ ձևերին:

Ինդուստրալացում—այդ նշանակում և թեթևացնել
գյուղացու և բանվորի աշխատանքը, նրանց աղատել
փոքրիկ արհեստանոցից, նեղ գործարանից, զյուղա-
ցուն աղատել դանդաղաշարժ յեղներից ու գոմեչներից
ու նրա ձեռքը տալ տրակտոր ու այլ մեքենաներ, նրան
տալ լուսավոր ու մարդարվայել բնակարան, կյանքի
համար ավելի լավ պայմաններ :

Մի խոսքով ինդուստրալացում—այդ նշանակում և
մեր յերկրի տնտեսության արագ բարձրացում, մեր

սոցիալիստական շինարարության—մեքենայացում, եկեղեցականացում, կովկասիվացում :

Ինչպես տեսնում եք շատ մեծ գործ և այդ ինդուստրալացումը և այդ մեծ գործը շատ մեծ միջոցներ և պահանջում, շատ գրամական ծախսեր և նախատեսում :

Իսկ ամեն մի գիտակից բանվոր ու դյուզացի լավ գիտե վոր մեր պետությունը շրջապատված և խմբերիալիստական թշնամի պետություններով ու Հենց այդ պատճառով արտասահմանի բուրժուաներից վոչ մի սպասելիք չունի, ընդհակառակը համոզված լինելով, վոր մեր սոցիալիստական հայրենիքը՝ Խորհրդային Միությունը, —բուրժուաների աչքին փուշ և բուրժուազիան ամեն կերպ խանգարում և մեր շինարարությունը, գավաղրություններ և նյութում նրա գեմ, —մեր յերկրի գիտակից բանվորներն ու դյուզացիները իրենց սեփական ույժերով արդեն տասն և մեկերորդ տարին և նվիրված սոցիալիստական շինարարությանը՝ այդ աշխատանքն առաջ են տանում մեծ վողերությամբ :

Խնդուստրալացման համար մեր պետությունը վաղուց և վոր դիմել և մեր յերկրի գիտակից բանվորների ու դյուզացիների ոզնությանը: Մեր բանվորները գեռ մի տարի չկա վոր ինդուստրալացման գործին 200 միլիոն ռուբլի պարտք տվեցին պետությանը դնելով ինդուստրալացման փոխառության տոմսերը: Դըրանից անմիջապես հետո մեր դյուզացիությունը Խորհրդային Միության մի ծայրից մինչև մյուս ծայրի ծածկեց «Գյուղացիական տնտեսության ամրացման»—100 միլիոն ռուբլու փոխառությունը՝ գնելով այդ փո-

խառության տոմսերը : Յեկ Խորհրդային Միության
բանվոր ու գյուղացի մասսաների այդ 300 միլիոն
ռուբլիները պետք է կատարեն և կատարում են իրենց
մեծ գործը գյուղի ու քաղաքի ինդուստրալացման
գործում :

Այժմ հերթը կոռակերացիային և կոռակերատի-
վին անդամագրված տասնյակ միլիոն բանվորներինը
և գյուղացիներինը :

Պետությունը կոռակերացիային այսօդ ու վորոշ
առում է .—

Այս մեջ չարք տարիները կոռակերացիան առեւտուր
և արել պետության միջոցներով , Պետական բանկի ու
կոռակերատիվ բանկի կողմից տրվող վարկերը , պե-
տական տրեստների ու սինդիկատների կողմից ապ-
րանքային վարկը—այժմ կրամառված են և դեռ ելի
կրամառվելու յեն , քանի վոր այդ միջոցների մեծ մասը
փոխադրվելու յեն նույնպես ինդուստրալացման գործի
մեջ դրվելու համար :

Կոռակերացիան աստիճանաբար պետք և անցնի
յուր սեփական միջոցներով աշխատելու : Կոռակերա-
ցիան պետք և ազատի պետական միջոցների մեծ մասը ,
վոր տարիներով նա ոգտագործման մեջ է պահել :
Այժմ այդ միջոցները անհրաժեշտ են ինդուստրալաց-
ման գործին : Իսկ ինդուստրալացումն արագացնում է
մեր սոցիալիստական շինարարությունը , ավելի շուտ
է մեզ մոտեցնում մեր վերջնական նպատակին—կոմ-
մունիվմին :

Ինդուստրալացումը առաջին հերթին . . .

IV Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԱՆԻ ԿՈՌԵՐԱՑԻԱՆ

Պարզ է, վոր կոռպերացիան պետք է կատարի բարձրագույն մարմինների հրահանգը: Նա պիտի աստիճանաբար յուր առևտրական շրջանառությունից դուրս հանի պետական վարկերի միլիոնավոր ռուբր լիները, (վորոնք պետք է զնան ինդուստրալացման դործին) և միաժամանակ ոլետք է յուր չըջանառության մեջ առնի կոռպերատիվի անդամ բանվորների ու դյուղացիների գրամական միջոցները: Կոռպերացիան պիտի ամենամեծ ուշք դարձնի ավելացնելու յուր սեփական միջոցները՝ առանց ծանրանալու պետական գանձարանի վրա:

Առաջին և ամենագլխավոր դրամական աղբյուրը ամեն մի կոռպերատիվի համար նրա անդամների փայլնարն է: Կոռպերատիվի վարչությունը պետք է անմիջապես և լրիվ կերպով ամեն մի անդամից հարվաքի կանոնադրական փայլ:

Յեթե մեր սպառողական կոռպերացիան բոլոր անդամներից լրիվ կերպով հավաքի փայտմաքարը նույն հեշտությամբ կը ճատված վարկերի փոխարեն չըջանառության մեջ կը դնի իր սեփական դրամագլուխը: Իսկ այդ կը նշանակի վոր կոռպերատիվը կշարունակի իր սովորական աշխատանքը սեփական միջոցներով. իսկ պետական միջոցները կը դնան ինդուստրալացման դործին:

Բացի այդ կոռպերացիան կարող է իր անդամներից ընդունել նաև ավանդներ, այսինքն ամեն մի անդամ կարող է և ոլետք է կոռպերատիվին պահ տալ իւնայած կոռպեկները: Ավանդները մի կողմից կը հեշտա-

ցնեն կոռպերատիվի աշխատանքը քանի վոր նրան ույժ
կըտան դրամով . մյուս կողմից ել խնայած գումարները
թէ ապահով կրպահեն և թե տոկոս կըտան հենց տեղն ու
տեղը :

Վերջապես կոռպերատիվի վարչությունը կարող ե
իր անդամներից նպատակային ավանենիք ընդունել : Այս
նշանակում ե—կոռպերատիվի անդամը վարչությանը
գործ պատվեր և տալիս և յեթե վարչությունը պատվե-
րը հանձն և առնում՝ կատարել—կոռպերատիվի անդամը
վորոշ գումար կանխավճար և մուծում կոռպերատիվի
դրամարկղը :

Դուք տեսնում եք թե կոռպերացիան ինչքան ճանա-
պարհներով կարող և զբամական միջոցներ հավաքել—
իր գործերը առանց պետական մեծ դումարների առաջ
տանելու համար :

Տեսնենք թե կոռպերացիան Հայաստանում ինչպես և
այդ աշխատանքը մինչեւ այժմ տարել :

Վ ՄԻ ՔԱՆԻ ԹՎԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերևում մենք ասացինք վոր կոռեպրատիվի կանո-
նագրությունն իրավունք և տալիս փայտավճարը մաս-
մաս մտցնել կոռպերատիվին :

Այսուեղ մենք պետք ե ասենք, վոր այդ իրավունքը
դժբախտաբար մեր կոռպերատիվիների անդամներն ի
շարն են գործ գրել մինչեւ այժմ : Շատերը վճարել են մի
կամ յերկու բուրլի յերեք-չորս տարի առաջ և այլես
վոչ մի կոռպեկ չեն վճարում : Կան շատերը վոր միայն
մուտքի վճար են մտցրել, կոռպերատիվի գրքույկ ստա-
ցել . . . և այլես կոռպերատիվի վարչության տասնյակ

անդամ արած առաջարկին՝ փայերը մուծել, — վոչ մէր
ուշք չեն դարձնում :

Արդպես չարունակել չի կարելի . . .

Չի կարելի վոր Հայաստանի սպառողական կոռպե-
քացիայի հարյուր հազարից ավելի անդամներից միայն
մոտ քսան հազարը լրիվ փայտեր լինեն, իսկ մնացած
ութսուն հազարը կիսատ փայտերեր (2, 3 կամ 4 ոուր-
լով) :

Չի կարելի յերեք չորս տարով անդամագրված լի-
նել կոռպերատիվին և 8-10 ր. փայը լրիվ չըմուծել:

Ճիշտ ե մեր չքավոր գյուղացին կամ բատրակը չեն
կարող մի կամ յերկու տարում լրիվ փայտեր լինել
սակայն մեր գյուղացիության հիմնական մասսան կա-
րող ե չատ հեշտությամբ մի տարում լրիվ փայտեր-
դառնալ. նա պետք ե լրիվ փայտեր դառնա :

Իսկ ինչ են ասում թվերը :

1927 թվի հոկտեմբերի 1-ին մեր կոռպերացիան,
Համտկապես մեր գյուղական կոռպերատիվներն, ունեցել
են միջին գանձած փայավճար 3 ր. 86 կոպեկ : Գյուղա-
կան կոռպերատիվների անդամների փայավճարային-
պարտքը յեղել ե մոտ 140 հազար ռուբլի : Ինչքան ուժեղ
կլիներ մեր կոռպերացիան յեթե այդ 140 հազար ռուբ-
լին լիներ նրա շրջանառության մեջ :

Հոկտեմբերի 1-ից մինչև ապրիլի 1-ը մենք տարել
ենք փայավճարային կամպանիա : Կարելի յե յենթաղրել,
վոր այդ դրությունը չատ պիտի փոխված լիներ, վոր
մեր փայավճարային պարտքը պակասել ե, վոր մաս-
մաս փայավճար տվողների թիվը կրճատվել ե :

Վո՞չ . . . դրությունը մնում ե նույնը . դրությունը
նույն իսկ ավելի յե վատացել : Մեր գյուղացիության-

ժեծ մասը կոռպերատիվին անդամ ե , կոռպերատիվից
ովտվում և սակայն լրիվ փայտվճար չի մուծում : Զնո-
յած , վոր կոռպերատիվների կանոնադրական փայը հա-
մարյա թե ամեն տեղ 10 ոուրլի յե , մինչև ապրիլի 1-ը
գանձված միջին փայտվճարը յուրաքանչյուր անդամից-
4 ո . 98 կոռպեկ ե :

Ուրիշ խոսքով ասած մեր զյուղական կոռպերատիվ-
ների մոտ 70 հազար անդամների վրա (բանկոռպների
անդամները չհաշված) — մնում ե 5-ական ոուրլի փա-
յավճարյին ապառիկ կամ 350 հազար ոուրլի պարտք :

Պարզ ե , վոր մի այդպիսի խոչոր գումարով , յեթե
նու դանձվեր ժամանակին , մեր կոռպերացիան ավելի
ժեծ նվաճումներ կաներ և զյուղին ավելի լավ կծառա-
յեր : Նրան ապրանքամատակարարումն ավելի լավ կը
կատարեր :

Այսպիսի դանդաղության համար ո՞վ և պատաս-
խանառու , ո՞վ և մեզավոր ...

Ի հարկե առաջին հերթին ամեն մի փայտեր պետք
է յուր լրիվ փայը մուծի : Յեվ յեթե նա այդ չի անում ,
նու կոռպերատիվի լավ ու պարտաճանաչ անդամ հա-
մարվել չի կարող , նա կոռպերատիվի կանոնադրու-
թյունը խախտում ե , հետեւապես և նա մեղավոր է յուր
կոռպերատիվի առաջ :

Սակայն ավելի ժեծ պատասխանառությունը
ուետք ե ընկնի կոռպերատիվի վարչության և վերստու-
գիչ հանձնաժողովների անդամների վրա , կոռպերատի-
վի ապարատների , խանության ու կուլտ-հանձնաժո-
ղովների , ուրիշ խոսքով ասած մեր փայակուտակման
գանձադության գլխավոր պատասխանառուն մեր կոռ-
պերատիվների ակտիվն ե :

Վոշ պակաս նշանակություն ունի նաև այն ուշագրությունն ու զեկալարությունը, վոր կոսովերատիվ աշխատանքին, և հատկապես փայտակուտակմանը, նվիրում են տեղերի հասարակական կազմակերպությունները (պրոֆմիությունները, կուս և կոմյերիտ բջիջները, փոկերը, և այլն): Այստեղ վորտեղ այդ ուշագրությունը դործնական բնույթ է կրու, մեր փայտակուտակման զօրծն ընթացել է հաջող և տվել ե շոշափելի հետևանքներ: Հետևապես փայտակուտակման հաջող կամ անհաջող հետևանքների մի մասն ել պետք է վերագրել հասարակական կազմակերպություններին (գյուղական) և նրանց գավառակային ու գավառական կենտրոնների աշխատանքին:

VI ԱՄԵՆԻՑ ԼԱՎ ՅԵՎ ԱՄԵՆԻՑ ՎԱՏ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

Թող մոր կոսովերացհայի Միջազգային Ըրին մէնք ցուցադրենք դավար-դավառ թե վոր դյուզական կոռորստիվներն են ավելի լավ աշխատել և վորոնք՝ ամենից վատ, ի հարկե յեխելով միայն նրանց փայտակուտակման թվերից:

ա) Դիլիջանի գավառում Առաջին տեղումն և Զայքենդի կոսովերատիվը՝ (5 ր. 61 կոպ. միջին փայտավարով)՝ ամենից հետ և մնում Աւզունթալայի կոսովերատիվը՝ (3 ր. 08 կ. միջին փայտավարով):

բ) Յերևանի գավառում Առաջինն և Ղամարլուի կոսովերատիվը՝ (5 ր. 57 կոպ.) և վերջինն և Մհուրի (Կոտայքի) կոսովերատիվը (3 ր. 41 կոպ.):

գ) Լենինականի գավառում առաջինն և Ղազանչիկի կոսպերատիվը (5 ր. 31 կոպ.) և վերջինն և Փոքր-Ղարբարիխայի կոսպերատիվը (3 ր. 12 կ.) :

դ) Եջմիածնի գավառում առաջինն և Գյոյ-Գումբ-բեթի կոսպերատիվը (6 ր. 73 կ.) և վերջինն և Ներքին-Խաթունարխը (4 ր. 01 կ.) :

յ) Լոռի-Փամբակի գավառում առաջինն և Ռուս-Գյառ-Գյառի կոսպերատիվը (9 ր. 37 կոպ.) և վերջինն և Կուրթանի կոսպերատիվը (3 ր. 70 կոպ.) :

զ) Նոր Բայազետի գավառում առաջինն և Յելենով-կայի կոսպերատիվը (5 ր. 74 կ.) և վերջինն և Նոր-Բայազետ քաղաքի կոսպերատիվը (4 ր. 35 կ.) :

ե) Դարձալազգյազի գավառում առաջինն և Արփայի կոսպերատիվը (6 ր. 23 կոպ.) և վերջինն և Փաշալվի կոսպերատիվը (4 ր. 32 կ.) :

Զանգեզուրի և Մեղրիի գավառները վայակուտակ-ման գործում հաջողություններ չունեն: Բացի Ղափանի «Լեռնագործ»—կոսպերատիվից (բանկոսպ) մնացած սովորությունները ունեն վայավճարների միջին մակարդակ և 1927 թվի հոկտեմբերի 1-ից հետո կես տարվա ընթացքում դպալի վայակուտակում չեն ունեցել:

Ալովիսով միջին վայավճարների տեսակետից Հայաստանի 9 գավառներից Լոռի-Փամբակի գավառն առաջինն է (6 ր. 31 կոպ.), Լենինականի գավառն ամենա-հետինն է (4 ր. 16 կոպ.):

Գյուղական կոսպերատիվներից Հայաստանի ամ-րողջ ցանցում՝

Ամենից առաջին տեղն և բոնում Ռուս Գյառուցյառի կոսպերատիվը 9 ր. 37 կոպ. միջին վայավճարով.

Ամենից հետ և Ուզունթարայի կոռպերատիվը Յ թ .

08 կ. միջին փայտավճարով :

Թող լավ կոռպերատիվները շարունակեն իրենց լավ աշխատանքը և ելի կուտակեն փայտադրամագլուխ .—

Թող հետ մնացող կոռպերատիվները ուժեղացնեն իրենց աշխատանքը և աշխատեն հասնել փայտակուտակման գործում բավ աշխատող կոռպերատիվներին :

VII ԿՈՌԵՐԱՑԻԱՅԻ ՄԻԶԱՋԱՅԻՆ ՈՐԻՆ Ի՞ՆՉ ԹԻՏԻ ԱՆԵԼ

Կոռպերացիայի միջազգային որին ամբողջ աշխարհում կոռպերացիան և կոռպերացիայի մեջ կազմակերպված մասսաները հանդես են գալիս իրենց նվաճումներովը, իրենց արածների և անելիքների մասին են խոսում, խորհրդակցում և ցուցաբերում են կոռպերացիայի ույժը. նրա մեծությունը :

Այդ որը արտասահմանյան կոռպերացիայի շարքերում կազմակերպված բանվորների ու գյուղացիների համար կոռպերացիայի քաղաքական և դասակարգացյին լոգունդների որ ե : Այդ որը կոռպերացիայի միջազգային կենտրոնը — Ալյանսը յուր պաշտոնական տոնակատարությունն և անց կացնում : Բնուրժուական կոռպերատորները հանդես են գալիս սովորական ճառերով «ադդերի յեղբայրության», «համասարության», «միջազգային գործակցության» և «զինաթափաման» մասին, իսկ նրանց քթի տակ — բանվորներն ու գյուղացիները ճնշում են, բանտերն ու աքսորավայրերը լցվում են հեղափոխական կոռպերատորների հարյուր ու հազարավոր մարտիկներով . Փաշխատները և բուրժուազիայի վարձ-

կան վոստիկանությունը կատարում են իրենց ու գործը
ճնշելով հեղափոխության ու ազատ ձգտումների ամեն
մի մորք :

Իսկ այդ պաշտոնական տոնակատարության հանդեպ խորհրդացին կոռպերացիայի և Խորհրդային Միության անկեղծ պաշտոնները—արտասահմանի հեղափոխական բանվորները և դյուզացիները, յուր համակրանքներն և արտահայտում Խորհրդային Միությանը և պատրաստվում և հետեւ խորհրդացին կոռպերացիային, պատրաստվում և պաշտպանել մեր Միությանը արտասահմանյան իմպերիալիստաների գաղաղրություններից : Յեկայդ յերկու բանակները, բուրժուական կոռպերացիայի և հեղափոխական կոռպերացիայի յերկու բանակները, իրար հետ քաղաքական ընդհարումների ճանապարհով հասունացնում են բանվորների ու գյուղացիների հաղթանակը :

Մեզ մոտ կոռպերացիայի միջազգային որը ամենից առաջ բոլոր յերկրների բանվորների ու գյուղացիների միջազգային կոռպերատիվ համերաշխության որ և : Յեկայդ որին մեր կոռպերացիան իր միլիոնավոր անդամներով գուրս դարձի ցույցի պարզ ու վորոշ բուրժուական յերկրների բանվորներին ու գյուղացիներին ցույց են տալիս կոռպերացիայի գարգանալու խիստական ճանապարհը : Այդ ճանապարհը քաղաքական իշխանության տիրելու հանապարհն է :

Այս լողունգից բղիսում և մեր մի շարք այլ քաղաքական լողունգները :

Արտասահմանի բուրժուական պետությունները պատերազմ են պատրաստում Խորհրդային Միության գեմ :

ՄԵՆՔ ասում ենք: «ՄԵՆՔ ուզում ենք խաղաղ շինարարությամբ զբաղվել: Զեռքներդ հեռու Խորհրդային Միությունից»...»

Բուրժուական յերկրներում ֆաշիստները աջ ու ձափառություններ են կատարում հեղափոխական կոռպերացիայի անդամ բանվորների ու գյուղացիների վրա, նրանց նետում են բանտերն ու աքսորավայրերը, նրանց ընտանիքներին ու համակրողներին հայածում են բուրժուական որենքների ամրող խստությամբ: ՄԵՆՔ ասում ենք «Կորչի ֆաշիզմը. կեցցե հեղափոխական կոռպերացիան: Մեր վողջույնը բոլոր աշխարհի կարմիր կոռպերատորներին»:

Սակայն այդ քաղաքական լոգունդների հետ միասին մԵՆՔ կոռպերացիայի միջազգային որին գործնականորեն ամրացնում ենք մեր կոռպերացիան, վարովհետեմ մեր սոցիալիստական շինարարությունը մեր կոռպերացիայի անդամ բանվորներից ու գյուղացիներից նույն իսկ տոններին վորոշ աշխատանք ե պահանջում:

Կոռպերացիայի որին մԵՆՔ հաշվառում ենք մեր անցածի նվաճումները, քննադատում ենք մեր բացերն ու պակասները և վորոշում ենք մեր ապագա անելիքները:

Հասոկապես Հայաստանի սպառողական կոռպերացիան յուր հարյուր հազարանոց բանվորա-գյուղացիական մտսաւյով կոռպերացիայի միջազգային որին յուր ամբացման համար հետեւյալ գործնական քայլերը պիտի անի:

1. Մոտիկից ծանոթանա սպառողական կոռպերացիայի զրության հետ Խորհրդային Միության մեջ և Հայաստանում:

2. Ամբողջ քննաւլսառության յենթարկի կոռուպերացիայի բացերը և նրա վերացման համար միջոցներ առաջարկի :

3. Կոռուպերացիայի անդամներին հաշիվ տա յուր արածների ու անելիքների մասին և յսի նրանդ բնհագառականը :

4. Ամրացնի կոռուպերացիայի չարքերը թե կազմուկերպչորեն և թե նյութապես :

VIII ԿՈՌԵՐԱՏԻՎԻ ԱՄԵՆ ՄԻ ԱՆԴԱՄ

1. Պետք է հարց տա յուր վարչությանը թե վարագվճարի գանձումն ինչպես և ընթանում :

2. Պետք է յուր փայտավճարը լրացնի՝ յեթե մինչեայդ որը նա չի լրացրել :

3. Մրցման պիտի հրավիրի յուր հարևաններին, ժանոթներին, փայտավճարի լրացման համար :

4. Պետք է պահանջի յուր վարչությունից, վոր չըվճարող անդամների ցուցակները Կոռուպերացիայի Միջազգային Որին ցուցադրվեն :

5. Ամեն մի գիտակից բանվոր ու գյուղացի պետք է այդ որը անդամագրի կոռուպերատիվին յուր ընտանիքի յերկրորդ անդամին. նոր կոռուպերատիվ զրքույլը մի կողմից տոնական նվեր կըլինի և մյուս կողմից—կոռուպերատիվի անդամների թիվը կշատանա :

6. Ակտիվ կոռուպերատորները պետք է այդ որը անետուն շրջեն և կոռուպերատիվի շարքերը գրավեն նոր բանդորագյուղացիական մասսաներ :

Շատ քիչ ժամանակ և մնում... կոռուպերացիայի Միջազգային Որը հուլիսի 7-ին է : Այժմից խել պիտի պատ-

բաստվել այդ տոնն անց կացնել թե հանգիստվոր և թե
գործնական :

Տոնի գործնական լողունգներն են .

— Բոլոր բանվորները , բանվորուհիները , գյուղա-
ցիքներ գեղջկուհիները — գեղի կոռպերացիայի շարքերը :

— Ազտագործել չքավորների կոռպերացման ֆոն-
գերն ամբողջությամբ !

— Վոչ մի անդամ առանց լրիվ կանոնադրական
փայլ !

— Ուժեղ ինքնաքննակատություն , կուլտուրի թական
աշխատանք և ձկուն ապագարատ !

— Դեպի կուլտուրական կոռպերատորների հասա-
րակակարգը կազմակերպված չարքերով Լենինի ցույց
այսած ուղիներով :

Սպառողական կոռպերացիայի աշխատողները այդ
որը մեծ անելիքներ ունեն հատկապես փայտականական
ասպարիգում :


Կոռպերացիայի Միջազգային Արև այդ տեսակետից
մի քննության որ ե :

Տեսնենք ով և հաջող բռնելու այդ քննությունը և
ով և «կարմելու» այդ քննության ընթացքում :

Հայկոռպը ուշադիր հետեւելու և և ամեն մի կոռ-
պերատիվ ակտիվի յուր արժանի գնահատականն և տա-
լու :

Դեպի գործ . . . գեղի գործնական մրցում

Ո՞վ և տատղինք :



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039658

[044]

ԳԻՒԸ 6 ԿՈՊ.

